

ԱՐՄԵՆԻ

Ա ԵՓՈ



391.99

Ա-26

ՊԵՏՎՐԱԿՑ

891.99

Ա-26

ՊԱՐՄԵՆ

12 MAR 2011

ՍԵՓՈ

(ՊՈԵՍ)

Նկարներ
ՇԱՎԱՐԾ ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆԻ



ՊԵՏՎՐԱՑ
ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՍՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ
1939



29 JUL 2013

53754



Եռվակ գյուղը ծվարել եր գեղեցկանիստ մի հովտում,
Ուր գարնանը ափից յելած Մոնչան գետն եր հորդում.
Մարդկանինը յերփներանդ թեթեվ հովից յերերում՝
Վորովես զուղված մի նորահարս նայում յերկնի հայելուն,
Ուր բաղմացեղ թուչունների ճռվողյունից գյութական
Գերվում եյին անտառն, առուն, անխոս քարերը անդամ:

Զորն յեղերող լեռների մեջ նշմարվում եր մի բլուր,
Անտառապատ, աղբյուրաշատ, բայց ինքը միշտ համբ ու լուռ.
Բլրի գլխին Ռիզա բեկի բերդն եր բաղմել քառահարկ,
Բարձր գահից նայում եր ցած արնածարավ ու անհագ:
Իր վոտքի տակ հավետ թշող Մոնչանը անխում,
Վոր կարծես թե խեղդվում եր խոր Վեշապակիրճ անդնդում:

Ռիզա բեկի հարստությունն անհուն եր ու անսպառ.
Նրանն եյին գաշտերն անափի, արտօնները վոսկեփայլ.
Յոթը հովիվ նրա հոսով ծածկում եյին ձոր ու սար.—
Այդ հնավանդ լեռնաշարքում ո՞վ կար նրան հավասար.
Նրա գոմից դուրս եր գալիս բաղմազլուխ մի նախիր,
Նա մի արքա, կրնկի տակ՝ դյուղերը հող ու մոխիր...

2

Մովակն ուներ Սեփո անվամբ նորաբողբոջ մի հովիվ,
Ինքը ոյութիչ ինչպես ծաղկով, աղբյուրներով լի հովիս.
Թավ հոնքերը ազուավի թե, ճակատը ծով անսահման,
Աչքերն արեվ, շուրթերն հյութեղ, բեկները սեվ ու կեռման.
Լայնաթիկունք ու լայնալանջ, բարձր, ինչպես հսկա սար,
Սիրում եր նա լեռներ, ձորեր, ջրերն անբիծ, ջինջ ու սառ:



35548-02
САРМЕН
СЕПО

Հայ Արմ. ՀՀ, Երևան, 1939

Սեփոն ծփում արտաներից ու սարերիցն իր սիրած
Միայն ձմռան եր ակամա վոչխարի հետ իջնում ցած:
Նրա հովիվ հայրը վաղուց, շա՛տ վաղուց եր մահացել.
Գյուղում ուներ լոկ մի խրճիթ, մի ժայր, միտատ՝ կույր ու ծեր,
Բայց վողջ գյուղը՝ մանուկներից մինչև վերջին ծերունին՝
Անհունորեն սիրում եր միշտ իր վորբ հովիվ կորյունին:


Քանի՞ բերվոր չքնազ կանայք ու աղջիկներ նորահաս
Փափազել են տիրել նրա սիրո սարին յերկնահաս,
Կյանքում զոնե զեթ մի անդամ նրա աչքերն համբուրել
Ու հոնքերի շվաքի տակ այրվող սրտերն որորել,
Բայց ինչպես վոր ալիքները չոյսում են ժայռն ու անցնում,
Նրանք գալիս զնում եյին, հովիվը նույն եր մհում:

Սակայն սերը բաց ե անում հաղար փակով կողպած դուռ,
Նրա առաջ անդոր են բերդ, շղթա, զնդան, կայծակ-թուր-
Անցնում ե նա ամեն արդեզք, խորտակում ե ամեն բան,
Սիրո սրով արքայուհու սիրտն ե մտնում մի չորան,
Գեղեցկուհի աղքատ աղջկան սիրում ե մեծ զորագար,
Սերն կարող ե կապույտ յերկնից արե, աստղեր բերել վար:

Յեվ ահա մի արեվոտ որ զբոսանքի դուրս յեկած
Բեկի աղջիկը, Զարիֆան ու նաժիշտները հանկարծ
Սարահարթի արոտներում տեսան հովվին առնական,
Հիացմունքից նաժիշտների լեզուները կապ ընկան,
Յեմ հովիվն ու դուստրը բեկի աչքը աչքին հառեցին,
Հմայլեցին ու իրարու անխոս, բայց խոր սիրեցին:

Յեվ այդ որից, ինչպես շանթը հանկարծ խփում ե ծառին,
Ծառն այրվում ե ու անտառը բաժին անում բոցերին,
Այնպես հովվի թարթիչների նիզակները սրածայր՝
Զարիֆայի սիրտը մտան, սրտից հողու խորքն անցան,
Ու նա դարձավ խոսքահույզ, գյուրարորոք, մենասեր,
Ուղում եր միշտ առանձնանալ, շատ մտածել, քիչ խոսել:

Յեվ այդ որից հովվի սիրտը դարձավ մի ծով փոթորկուն.
Նրա շվու դայլայիկը վողջ աշխարհն եր համակում.
Չով հովերը, առվակները, աղբյուրները սառնորակ



Զեյխն մարում նրա սրտում վառվող սերը՝ բարեկ-կրակ։
Սար ու ձորեր նրա համար դարձան մի բանտ ձանձրալի,
Գիշերները հոտը թողած՝ բերդի շուրջն եր ման դալի։

Բայց իր որում վոչ մի չորան գեռ այդ բերդը չեր մտել։
Սիրով արբած հովիվ Սեփոն այդ բանը շատ լավ գիտեր
Ու նայում եր Զարիֆայի լուսամուտին կիսարաց,
Դոնապահին, յերկաթեղեն դարպասներին պինդ կողպած,
Նորից սարերը բարձրանում, հոտը փոռում կանաչում,
Եվին զլում ու շվու հետ տխո՞ւր, տխո՞ւր հառաչում։

Որեր անցան, — հովիվ համար ամեն մի որ՝ մի ձիգ դար.
Նրա շին լացացրեց և՛ ձոր, և՛ սար, և՛ անտառ.
Ու մի որ ել աղալարներ, բեղզագաներ հյուր եկան,
Նշանեցին են նազանի, են հրեղեն աղջկան։
Որենք եր դա, բեկի զուստրը պետք և սիրեր լոկ բեկին,
Բայց Զարիֆան դեմ ծառացավ այդ հինավորց որենքին։

— Հայր, — ասաց նա, — վերելին ալլահ, ներքեվը դու,
միայն դու,
Յես քո բալեն, քո գերին եմ, ո՛ւմ ուզում ես ինձի տուր,
Յերբեք, յերբեք մուր չեմ ցանի քո սրբազն նամուտին,
Յես նրա կինը կինեմ, նա ինձ՝ արդար ամուսին,
Բայց սիրում եմ մի չորանի, նա՛ յե տերը իմ սրտի,
Նրանն եմ յես, ուզում ես սուր խանչալը առ, ինձ բրդի։

Ասաց աղջիկն ու հեկեկուն, հուզված նստեց մոր կողքին,
Սեկ-սեկ ամպեր կուտակիվեցին հոր աչքերի յերկնքին,
Նրա ճակտի կնճիռների լեռնաշղթան զալարվեց,
Նա վեր յելավ ու հոնքերի աղեղները խիստ լարեց,
Զեռքը տարավ փղոսկրյա կոթ ունեցող դաշույնին,
Բայց այդ ձեռքից բռնեց իր տան խորհրդատու ծերունին։

— Զահել ե նա, — ասաց ծերը, — զահել ե ու բորբոքուն,
Զահելն իր վաստ յերազներում ժայռից ել վարդ և պոկում.
Այդ հասակում մարդու սիրու քմահած ե ծովի պես.
Մեկ ուեսնում ես ալեկոծվեց, մեկ ել դարձավ մեղմ ու հեղ.
Կմեծանա, կյանք կտեսնի, կմոռանա ամեն ինչ.
Պղտոր գետը լոկ ծովումն ե դառնում զուլալ, պարդ ու ջինջ։



— Իմ Զարիֆան կմեծանա, կմոռանա ամեն բան.
Նստիր, Ռիզա, չե՞ վոր դա յե յեղել նաև մեր ճամբան.
Յեվ աշխարհում քանի գեռ կան արեվ, աստղեր, ծնունդ, ժահ,
Բեկի աղջիկը չորանի կինը յերեք չի դառնա,—
Ասաց մայրը ու համբուրեց ազջկա աչքերը վճիտ
Ու ցած ընկան վորպես հակինթ արցունքների յերկու չիթ:

Ու ափերից պոռթկած-յելած փըրփըրացայտ գետի պես՝
Բեկը քիչ-քիչ հանգստացավ, ասաց. «Աղջիկս, ապրես,
Վոր բաց արեր քո հոր առաջ, ինչ կար սրտիդ մեջ թաղում.
Մարգարիտը վոչինչ չարժե ովկիանոսի հատակում,
Բայց անդին ե, ամենազոր, յերբ հանում են լույս աշխարհ.
Այդպես ել քո սուրբ զազտնիքը անդին քար ե ինձ համար:

Ահա նորից մոռացության ծովն եմ նետում յես նրան.
Համարենք թե վոչ յեղել ե, վոչ լսել ենք այլպես բան...
Յեվ նույն զիշեր նշաննեցին Զարիֆային նազանի,
Տիին հարուստ, պատկառելի մի ալեզարդ իշխանի,
Յոթը գիշեր, յոթը ցերեկ հարսանիք եր մեղրածոր,
Դհու զուռնի անուշ ձայնից զզրդում եր սար ու ձոր:

3

Արշալույսին՝ զառնարածներ ու մի ծերուկ նախրապան
Լույս բերին, թե բերգում տոն ե, հարս ե զնում Զարիֆան:
Սեփոն լսեց շանթող գումը, զզաց խոցող մի կսկիծ,
Բոցավառվեց, կարծես զլիին կրակ թափեց յերկնքից.
Թեեւ վիշտը ահավոր եր, հառած վերքը՝ խոր ու մեծ,
Բայց նա զսպեց ցասման վազքը ու վիշտը գուրս չթափեց:

Յերկա՞ր, յերկա՞ր խոսում եյին, Զարիֆային գովերգում.
«Երնեկ նրան, ով ես զարգոտ, ես անցավոր աշխարհում
Կոտիրանա եղ աննման, շաղաղ-շարժաղ մարալին,
Ում շրթունքը գեթ մի անդամ կառնի նրա սեվ ինալին»,
Ասին նրանք հազարերանդ ծաղիկներով լի ձորում.
Բաժանվեցին, բայց Սեփոյի սրտից արյուն եր ծորում:

Սեփոն յելակ, հոտը մեկից իրար գլխին ամբարեց,
Մերի այժին կանչեց իր մոտ, գլուխը ջերմ համբուրեց.
Չտեսնված քնքությամբ գգվեց, շոյեց չներին,
Մնաս բարով ասաց հպարտ, բարձրագաղաթ սարերին,
Յեվ վոչխարի առաջն ընկած, ինչպես բանակ հորձանուա
Բլրից իջակ, բոնեց բեկի և' արտ, և' դաշտ, և' կաղնուա:

Մովակ գյուղը անց եր կացրել հաղարամյա մի փակ կյանք,
Բայց իր որում գեռ չեր տեսել մի բան այդքան արտակարգ:
Մեկը-մեկին վորպես նորույթ հոտի դան եր հաղորդում.
Բերներերան մեծանալով լուրը անցավ տնից-տուն.
Գեղջուկները դուրս թափեցին, տանիքներին շարվեցին.
«Վատ նշան ե», —ծերերն ասին, —գլուխները շարժեցին:

Բեկը շքեզ շքախմբով դուրս եր յեկել պատշգամբ,
Դիտում եր իր դաշտերն անհուն ու լեռները հոյակապ.
Մեկ ել հանկարծ նրա ճակտին սեվ-սեվ ամպեր գոյացան,
Կնճիռների անդունդերը ել ավելի խորացան,
Յեվ նա գոռաց. «Այդ ո՞ւմ հոտն ե, որ ցերեկով ինչպես ձյուն
Մածկել կանաչ իմ դաշտերը, այլպես անհոդ արածում:

Ո՞վ ե հանդուզն այն հովիվը, վոր հողիս վոտք ե գրել,
Նրա ցեղը պետք ե ձիու վոտքերի տակ տրորել.
Զալի՞ւ, ասա, ո՞ւմ հոտն ե դա, իմ թշնամի Զալ բեկի՞,
Թե արնախում խան Խալըդն ե քանդում ամբարն իմ բերքի.
Ուզարկեցեք խոլամներիս և շուտ, շտապ լուր բերեք».
Զալիլն ասաց. «Ով ել լինի, պետք ե պատճել, արքա բեկ»:

4

Անարհ, անձայն ձիերն հեծան յերկու խոլամ հաղթիրան
Ու հողմի պես՝ զառիվայրով գեպի դաշտերը թռան.
Հասան, տեսան գետի ափին նստել ե մի աժդահակ,
Զեռքին՝ կաղնե կորագլուխ հսկայական մի մահակ,
Ասին՝ բարեվ, չորան Սեփոն, եղ քեզ ի՞նչ ե պատահել,
Գժվե՞լ ես դու, թե՞ սիրուց ե աշխարհն աչքիդ խավարել:

Ինչպես ես դու համարձակվել մտնել արտերը բեկի,
Կատաղել ե Ռիզա բեկը, վեր կաց, փախիր, քեզ փրկիր,
Կերթանք, կասենք, Ծովակ գյուղի հովիսն ընկել ե ժայռից,
Վոչխարն անտեր, անտիրական ցրվել իջել ե սարից.
Վե՛ր կաց, թե չե հիմա կզան ձիավորներ անհամար,
Դե՛, շուտ փախիր, ի՞նչ ես նստել եղանես թախծոտ ու համառ:

Քմծիծաղով հանդարտ ու վեհ կանգնեց Սեփոն՝ Արարատ,
Ռւսերից ցած լեռ ու ըլուր, վոտքերի տակ դաշտ ու արտ,
Յեվ մի ձեռքով բռնեց ցուպը, մյուսով՝ կոթը դաշույնի.
— Վերապարձեք, — ասաց նրանց, — Սեփոն ձեզ հետ գործ չունի?
Գուրք ել ինձ պես ունչպար մարդիկ, մեր պապերը բարեկամ,
Եեր մեջ վրեժ, թշնամություն վո՛չ յեղել ե, վո՛չ ել կա:

Ռիզա բեկն ե իմ թշնամին, թող ինքն անձամբ դա մերեան,
Դե՛, զնացեք, հայտնեք նրան, — ասաց հովիվը տիտան.
Յեվ խորամներն ահարեկված հովի դեմքից շանթալի,
Դաշտը թողին ու սրարշավ մտան զիրկը անտառի.
Յեկան, բեկին գլուխ ամին, քանց աստծու հողածին.
Ի՞նչ տեսել ու լսել եյին հելքոտ չնչով պատմեցին:

Զուռնան լոեց. հարսանիքի ցնծությունը պապանձվեց,
Տղամարդիկ գուրս թափեցին, բերդը մեկից դատարկվեց,
Պարսպապատ բակը լցվեց հուղված ծովը մարդկային,
Հործանք տալով սպասում եր Ռիզա բեկին — արքային:
Յեվ ահա նա. ձեռքի շարժում, բացվեց գուրը փառահեղ
Ու վոլորուն ճանապարհով առաջ հուսեց հեղեղ:

5

— Զի ծնիել դեռ վոչ մի հովիվ, — ասաց բեկը չորանին,
Վոր մոտենա Ռիզա բեկի հող ու ջրի սահմանին.
Բայց դու իդիթ ես յերեվի, զեհ, պատրաստիր, ո՛վ իդիթ,
Խենթությունդ ծալիր մի կողմ, ցույց տուր հունարը բաղկիթ:
— Ռիզա բեկն ե իմ թշնամին, — ասել ես դու կատաղած.
Դեհ, յեկ մերգան, մենակ կովենք, ա՛յ անաղուն ջրաղաց:

— Մենակ քեզ հետ սուր-սրի տալ վայել չե մի չորանի,
Դու խաս-ատալաս չորեր հաղած, յես սարերի յարանի.
Յես ի՞նչ իդիթ, դու ես իդիթ, վոր մի անզեն հովիվի գեմ
Հանել ես մի ամբողջ բանակ, մարդիկը հստիցըս շատ են.
Դե՛հ, պատրաստվեք բոլոր բեկերդ, բեկղադաներդ արքէշում,
Ասաց Սեփոն ու յափնջու տակից քաշեց մի դաշույն:

Ինչպես նախիրն ընկած առյուծ մտավ բանակը բեկի,
Վոտքի տակին դաշտը տնքաց, սարսափ պատեց ամենքին.
Նրա վորոտ-մոնչոցից ժայռերն ուժգին ցնցվեցին,
Արագահոս գետակները իրենց ուղին փոխեցին.
Տըրում եր, ջարդում, փշում, չեր խնայում վոչ վոքի.
Արար-աշխարհ, յերկինք-զետին հավետ մթնել եր աչքին:

6

Միջորեյի արելն արդեն սկսում եր խիստ այրել,
Գյուղի բոլոր հստաղները գետավին եյին հավաքվել.
Մեկը զսմեց եր լվանում, մեկը՝ յեղներ հստավիդ,
Մեկը սրինդ եր նվազում, հիշում յարին իր ազիզ.
Մյուսները ճան եյին խաղում, յերբ լսվեց ձիչ զիվային.
— Հե՛յ, հե՛յ, հասեք, սպանեցին մեր Չորանինց Սեփոյին:

Ով ինչ ուներ, առավ, թոավ հրապարակը մարտի.
Մեկի ձեռքին արմատահան չորս տարեկան մի բարդի,
Մեկինը սուր, լայնշեղը դանակ, մեկին թելե պատրաստիկ,
Բոլորն ել ինենթ վրիժափառ, հուղված և՛ բորբ, և՛սաստիկ.
Հասնազն իրեն ցցեց կովի փոթորկվել արնաթույր
Ու բեկերին, աղաներին, մեծին, վոռքրին՝ տուր հա տուր:

Լուրը հասավ Ծովակ գյուղին, պոռթկած յեկավ գյուղն
ամբողջը
Ամենքի սիրու վիրավոր, ամեն մեկը հուր ու ըոց.
Կովի հրդեհը բորբոքվեց, Սեփոյի սիրու խնդաց,
Յոթնապատկիւց ուժը նրա, դարձավ մըրիկ սրընթաց,
Անցավ գլուխը փոթորկված կորիճների հողաղործ
Յեվ մինչեւ վերջ վարեց կովին անինա ու ալեկոծ:

Արեգակը մայրամուտի լուսամուտից եր նայում,
Կովի դաշտում լոռոթյունն եր միահեծան արքայում:
Կանաչ դաշտը կարմրել եր առատ թափված արյունից,
Կարծես կարմիր մի անձրեվ եր վար տեղացել անհունից:
Մի բանակը բերդն եր տանում Ռիզա բեկի արնոտ դին,
Մեկն իրենց գյուղ՝ հազար տեղից դաշունահար իզիթին:

Ծովակ գյուղում կար դարավոր մի վեհ կաղնի չուքավետ,
Բեկի բանակը սարն ի վեր բարձրանում եր գեղի բերդ,
Յերբ Սեփոյի ընկերները, վորոնց հետ և խաղացել,
Յեվ տիրել եր, և խնդացել, հասակ առել, բարձրացել,
Են հոտաղները պարզասիրտ, հովիվները դրացի՝
Այդ կաղնու տակ նրան հանդարտ թեվերից ցած դրեցին:

Աչքերն այրող մի կարոտով բացեց Սեփոն մահամերձ,
Այդ հայացքում ծովացել եր անհայտ մի վիշտ խոր ու մեծ.
Նայեց իր մոր, վերջալույսին, ընկերներին սրտակից,
Աղեկտուր թառանչ քաշեց հոգու պապակ ակունքից,
Ուղեց ասել մի ինչ վոր բան, բայց չուրթերը դավեցին,
Յեվ կոպերը, աչքի դռներն ընդմիշտ ամուր փակվեցին...

Թափորն ահեղ լոեց մի պահ, մարդիկ կարծես քարացան,
Հանկարծ հորդեց ակն արցունքի, լսվեց լացը բարձրաձայն.
Մորմոքացին հայ աղջիկներ, քրդուհիները սեվաչ,
Լաց ու արցունք արհամարհող ջահելները լայնալանջ,
Հովկի չները դառնաղի վոռնում եյին, հեկեկում,
Կանաչ կաղնին դեղին հազար այդ սղավոր իրիկուն:

Մայրը չորերն եր պատռոտում, դիխի մազերը փետտում.
Մերթ ժպտում եր անմիտ ժպտով, մերթ մոայլվում,
ամպոտում.
Մերթ մտածում եր զլիսահակ, մերթ յերեսը չանդռում.
Մերթ զլիսառը թափ տալով գնդնում եր ու պարում.
— Իմ Սեփոյի խարսանիքն ա, հե՞ր չեք խաղա, աղջիկներ,—
Ասում եր նա ու ծիծաղում սոսկալի ու սրտավեր...



Շըխկոցով հետ-հետ զնաց, բացվեց դարպասը բերդի;
Հորդան հորդեց ու ներս տարավ մոայլ դիակն իր պետի;
Նորից փակլեց դուռը դաժան, տիրեց ծանր լուռթյուն,
Լուռթյան մեջ մի աղջիկ եր անդուսպ, անվերջ մղկտում,
Յերկու սեվ վիշտ եյին կրծում նրա սիրու սիրազարկ,
Մեկը-մեկից մեծ ու անչափ, մեկը-մեկից վառ ու բարկ:

Մշուշն ինչպես մի լայնափեշ համապարփակ վերարկու,
Պարուրել եր սարերը սեգ, լցվել ձորերն ահարկու,
Յեվ խավարը, վորպես անափ, անեղրական ովկիանոս
Որորում եր քնած աշխարհն ալիքներով մեղմահոս,
Սակայն Ծիզա բեկի բերդը դեռ հուզված եր ու արթու,
Յեվ բեկերի խորհուրդն ահեղ մի մեծ վոճիր եր նյութում:

Ծանր նստած դիվան խանի ասեղնազործ բարձերին՝
Մըրադ բեկը, մոլլա Միրզան իրենց նխտը բաց արին.
— Վրեժ, վրեժ, — զուաց մոլլան, տերն և Ծովակն անիծել,
Բնաջնջել, ել չնայել հայ, քուրդ, մանուկ, կին ու ծեր.
Յեվ խորհուրդը վորոշելով ջնջել Ծովակն աշխարհից՝
Ցրվեց, մնաց լոկ դիշերը տիրակալ ու ահալից:

Ամբողջ գիշեր սալն եր դոփում ու խրխնջում բեկի ձին,
Այլաբացը մոտենում եր. աքլորները կանչեցին,
Հանկարծ բացվեց Մոնչանին նայող մի լայն լուսամուտ,
Լամպի շողերը նախեցին դիշերվա քողը կապույտ,
Յելավ կանգնեց տատուհանում մի արարած յերերուն
Յեվ բարձրունքից իրեն նետեց Մոնչանի ջրերում:

Անցավ բեկը իր տոհմի հետ, անցան և՛ գահ, և՛ արքա,
Բայց հովիվը դարձավ դյուժիչ հեքյաթների առարկա,

Ուխտատեղի դարձավ նրա գերեզմանը կաղնու տակ,
Մերունդները սերունդներին վորածս անդին մի կտակ
Քողին սիրո մի տիսուր յերդ հովիվի մասին ապստամբ,
Բանաստեղծն այդ յերդը թրծեց իր վառ հոգու ջերմությամբ:

1937 թիվ, դեկտեմբեր



Պատ. իմբազիր՝ Գ. Սարյան
Տեկ. իմբազիր՝ Ան. Գասպարյան
Մրբազիչ՝ Ա. Արզաքանյան



Գլուխով լիազոր՝ Վ. 2079

Հրամ. № 4827.

Գլուխով 211. Տիրաժ 3000.

Բռնշջ 62X94. Տպագր. 1 մամ.

Մէկ մամ. 38,400 նշան.

Հանձնված ե արտադրության 28 փետր. 1939 թ.

Ստորագրված ե տպագրության համար 13 ապր. 1939 թ.

Պետհատի տպարան, Յերևան, Անինի 65

«Ազգային գրադարան



NL0360513

53754

ԳԻՆԸ 80 կ.

САРМЕН
СЕФО

Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.